Տ. ԹՈՎՄԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(18 մարտ, 2022 թ.)

«Ոդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են,
քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց»
(Ղուկ. ԺԶ. 8)։

Սիրելինե՛ր,

Ընդամենը երեք շաբաթ առաջ Ադամը՝ մարդը, աստվածատունկ դրախտում բարի կենդանություն էր վայելում, որից դուրս վռնդվեց իր գործած մեղքի պատճառով։ Փակվեց Դրախտի դուռը։ Արտաքսումի դեգերումներից հետո, սակայն, ամենողորմ երկնային Հայրն Իր անառակ զավակներին վերադարձի եւ վերընդունելության հնարավորություն տվեց։ Այսօր՝ Մեծ պահքի՝ թվով չորրորդ խորհրդածության օրը, մեր երկնային Վարդապետը մեզ սովորեցնում է քրիստոնեական ամենակարեւոր դասերից մեկը։

Այսօր Անիրավ տնտեսի կիրակին է, եւ դատելով օրվա խորհրդից՝ այն թերեւս կարելի էր վերնագրել «Քրիստոնյան եւ դրամի ճիշտ գործածումը»։

Մեծ պահքի հոգեւոր ու ներդաշնակ հոգեմտավոր ճանապարհն ընդմիջվում է իմաստուն եւ խրատական մի պատգամով, թե ինչպես քրիստոնյան պետք է ճիշտ օգտագործի դրամը՝ գործածի, եւ ոչ գործածվի։ *Մեծ պահքը, այս կիրակիից սկսած, ոչ միայն ապաշխարություն է սովորեցնում, այլ նաեւ իմաստություն։*

Նախ հիշենք Անիրավ տնտեսի առակը։ Մի մեծահարուստ մարդ մի տնտես ուներ՝ ժամանակակից եզրույթով ասած՝ «կառավարիչ», որն իր տնտեսական գործերի եւ ունեցվածքի կառավարիչն էր։ Տնտեսի հիմնական պարտականությունն իր տիրոջ ունեցվածքի ավելացումն էր եւ տնտեսական գործերի պատշաճ վարելը։ Մի օր ամբաստանություն է լինում, թե տնտեսը վատնում է իր տիրոջ ունեցվածքը։ Մեծահարուստը կանչում է նրան եւ ազատում աշխատանքից, իսկ տնտեսը կանչում է

նրանց, ովքեր պարտք էին իր տիրոջը, եւ կրճատում այդ պարտքերի չափը։ Տեսնելով սա՝ մեծահարուստը գովում է իր անիրավ տնտեսին։

Անշուշտ, աշխարհի մտածողության համաձայն՝ նման գործելաոճը դատապարտելի է։ Պատկերացրե՛ք՝ դուք ունեք շահութաբեր մի կառույց, օրինակ՝ վաճառատուն, խանութ, որն ունի աշխատող, որը շահույթ չի ապահովում, եւ երբ նրան ազատում եք աշխատանքից, նա կանչում է խանութի պարտապաններին եւ կրճատում նրանց պարտքերը, իսկ դուք գովում եք ձեր աշխատողի նման քայլը։

Ուրեմն, առակը սովորական մի պատմություն չէ, այլ աստվածային խորհուրդ եւ իմաստուն պատգամ պարունակող ավետարանական մի պատում։ Մեզ համար նմանատիպ պատմություններն անտրամաբանական են՝ մարդկային մտքով ասված, քանի որ Աստծու մտածողությունը տարբեր է մեր մտքերից, նպատակներից, ինչպես Իր ճանապարհներն են տարբեր մեր մարդկային ճանապարհներից։

Ո՞վ է առակի մեծահարուստը։ Գրեթե բոլոր մեկնիչները միաբերան հաստատում են, որ առակի մեծահարուստն Աստված է։ Իսկ տնտեսը մարդիկ են, որ Աստված կարգել է Իր մեծ տնտեսության վրա՝ այս աշխարհի մեջ։ Եւ որքան ողորմած է Նա, որ թույլ տվեց անիրավ տնտեսին պաշտոնից հեռացվելուց հետո նույնիսկ օգտվել այդ պաշտոնի լիազորություններից եւ իր համար անիրավ մամոնայից բարեկամներ ձեռք բերել։ Այս առատաձեռն ողորմությունը մեզ հիշեցնում է Աստծու հանդուրժող եւ ներող հայրական հոգածությունը մեր հանդեպ։

Պատգամը, խրատը, որ կուզեի ընդգծել, մեր բոլորի աշխատասիրությունը պետք է լինի։ Պատահական չէ, որ Աստված մեծահարուստի կերպարով է մեզ հայտնվում այսօր։ Մեծահարուստներ էին նահապետները՝ Աբրահամը, Հակոբը, Իսահակը։ Ավելին, Հին Կտակարանի մտածողությամբ՝ եթե մարդն աղքատանում էր, ապա նա զրկվել էր աստվածային օրհնությունից։ Մեծահարուստ նահապետները հարուստ չծնվեցին։ Աբրահամը, գրեթե ոչինչ ունենալով, մտավ Եգիպտոս եւ դուրս եկավ՝ արդեն մեծ հարստության տեր դարձած։ Հիշենք՝ քանի քրտնաջան տարիներ աշխատեց Հակոբ նահապետը։ Մինչեւ թագավորության փառքին հասնելը որքան փորձությունների մատնվեց Դավիթը։

Շատերը մերժում են հարստությունը, հարուստ լինելու ձգտումը, բարօր կյանքը, որը, իհարկե, սխալ միտում է։ Ուրիշ բան է կամավոր աղքատությունը, որը շնորհ է եւ ամեն մարդու տրված չէ։ Կամավոր կերպով

աշխատածը, վաստակածը զոհաբերել եւ հատուկ կյանքով ապրել Աստծու հետ եւ հանուն Նրա փառքի. այդ մարդկանց մենք անվանում ենք ճգնավորներ կամ վանականներ՝ մարդիկ, որ չունեն անձնական ունեցվածք, ամբողջապես հրաժարվել են աշխարհից եւ աշխարհիկից։ Բայց սովորական քրիստոնեական կյանքով ապրող հավատացյալն ունի պատվիրան՝ իր ընտանիքին հոգ տանելու, ինչպես նաեւ նյութապես ապահովելու սեփական կյանքի բարեկեցությունը եւ դրանով զորացնելու իր համայնքը, հասարակությունը, պետությունը, Եկեղեցին։ Այս պատգամը հատկապես այժմեական է մեզ համար մեր երկրում եւ մեր ժողովրդի համար ավերիչ եւ աղետալի պատերազմից հետո՝ ճգնաժամային այս շրջանում։

Մեղքն ունեցվածքը չէ, մեղքն այդ ունեցվածքը սխալ գործածելն է, փողը ոչ թե որպես միջոց, այլ իբրեւ նպատակ օգտագործելը։ Մեղք է դրամի ու հարստության պաշտամունքը, հանուն այդ դրամի ու ունեցվածքի ապրելը։

Այսօրվա աշխարհն իր բազմաթիվ բացասական նորամուծություններ ի կողքին ունի նաեւ դրական կողմեր։ Այսօր կյանքը շատ տարբեր է։ Երեք ամսում մարդիկ նոր հմտություններ են ձեռք բերում՝ մի նոր օգտակար մասնագիտություն։ Մնում է աշխատասեր, կյանքով լեցուն, ապագայի հանդեպ լավատես ու հուսառատ լինել։

Գերմանիան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հիմնահատակ կործանված եւ մի քանի մասի բաժանված, ամենաշատ պարտքեր ունեցող պետությունն էր, այսօր շնորհիվ քրիստոնեական տնտեսվարության, քրիստոնյա-դեմոկրատական սկզբունքների արդյունավետ գործածման՝ տնտեսապես աշխարհի լավագույն երկրներից է։

Այսօր սովորում ենք չմերժել մամոնային, բայց սովորում ենք նաեւ չլինել նրա ստրուկը, չկորցնել աստվածանմանությունը, հոգու առողջությունը։

Սիրելինե՛ր, քրիստոնեությունը բարօր կյանքը չի մերժում ամենեւին, ինչպես նաեւ մեծահարուստներին։

Այս վանքերը, եկեղեցիները, որտեղ մենք երկրպագություն ենք անում, կառուցվել եւ վերանորոգվել են բոլոր դարերի մեծահարուստների կողմից։ Դպրոցներն ու համալսարանները, որոնք աշխարհին տվել են մեծագույն գիտնականներ, փիլիսոփաներ, արվեստի ու մշակույթի մարդիկ, կառուցվել եւ հովանավորվել են մեծահարուստների կողմից։

Ղուկասի Ավետարանի հենց նույն՝ ԺԶ. գլխում պատմվում է նաեւ «Աղքատ Ղազարոսի» առակը, որտեղ մեծահարուստը դատապարտվեց ոչ թե հարուստ լինելու, այլ այդ հարստությունը պաշտելու համար։

Ինչպե՞ս դրամը կամ ունեցած հնարավորությունները ճիշտ եւ աստվածահաճո օգտագործել։ Շատ կարճ է պատասխանը եւ հստակ՝ հնարամտորեն։ Կրկին կարդանք ավետարանական հատվածը. «Եւ ես ձեզ ասում եմ. անիրաւ մամոնայից ձեզ համար բարեկամներ արէք, որպէսզի, երբ այն պակասի, յաւիտենական յարկերի տակ ընդունեն ձեզ։ Քիչ բանի մէջ հաւատարիմը շատի մէջ էլ հաւատարիմ է. իսկ քչի մէջ անիրաւը շատի մէջ էլ անիրաւ է։ Արդ, եթէ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չեղաք, ձեզ ո՞վ կվստահի ճշմարիտը։ Եւ եթէ ուրիշինի մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ կտայ ձեզ։ Ոչ մի ծառայ երկու տիրոջ ծառայել չի կարող. որովհետեւ եթէ մէկին ատի, միւսին կսիրի. կամ եթէ մէկին մեծարի, միւսին էլ կարհամարհի» (Ղուկ. ԺԶ. 9—13)։

Այո՛, եթե անիրավ մամոնայի մեջ հավատարիմ չեղանք, մեզ ո՞վ կվստահի ճշմարիտը։ Տեսեք՝ որքան կարեւոր է ունեցած միջոցների ճիշտ օգտագործումը, որ դրանով որոշվելու է նույնիսկ մեր երկնային վարձատրության չափը։

Մամոնան արեւելյան լեզուներում նշանակում է «ունեցվածք, հարստություն»։ Հնարամտության կոչ է անում Տեր Հիսուս այսօր մեզ նյութական հարցերում։ Ոչ ոք չգիտի՝ ինչ է լինելու հաջորդ պահին, երբ ենք հաշվետվության կանչվելու մեզ տրված տնտեսության համար յուրաքանչյուրս մեր դիրքում, ոլորտում, ծառայության մեջ։ Եւ Տեր Հիսուս սովորեցնում եւ հիշեցնում է, որ քանի դեռ ժամանակ ունենք, քանի դեռ տնտես ենք աստվածատուր այս կյանքին եւ մեզ վստահվածին, չմոռանանք, որ այդ ամենը հավերժ չէ։ Հնարամիտ ու խելացի լինենք, որպեսզի պահի հաջողությունը չկուրացնի մեզ։

Լինենք աշխատասեր, հնարամիտ ու հաջողակ, ներենք մեկս մյուսի պարտքերը եւ գործածենք այդ ամենի արդյունքը՝ մեր հոգու փրկության եւ Աստծու փառքի համար. Զէ՞ որ հենց իրական Տիրոջից ենք լսելու հաշվետվության կանչող ահեղ ձայնը. «Տո՛ւր քո տնտեսութեան հաշիւը» (Ղուկ. ԺԶ. 2)։

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն։